

# ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՍԵՓՅԱՆՑԻՆ

**Հարգելի հայր սուրբ.**

Երկու շաբաթ է, ինչ որ վերադարձել եմ Մոսկվից: Գնացել էի ցուցահանդեսի գործերով, բայց ուրիշ բաներ էլ պատահեցան, այնպես որ մի քիչ ուշացա:

Հայ գիտի էջմիածի՞ն, երանի թե չի ճիջանդանայի ու մնայի: Ձեզ մոտ ինչքան աշխատած կլինեի: Կարծեմ որ այդ դերը կատարում է Վարդգեսը*: Շատ ուրախացա՝ իմանալով ձեր ձեռնարկությունը՝ նյութ հավաքել գաղթածության վերաբերյալ թանգարանի համար, և շատ եմ ափսոսում, որ ես այդ գործում օգտակար չեղա: Ես Մոսկվայում ստացա նամակ Եղիշեից**, որտեղ հայտնում էր դրա մասին: Ես կարծեմ, որ այդ գործում ձեզ շատ օգնած կլինեն Վարդգեսը և Հազարապետյանը***:

Հայր սուրբ, գարունը եկավ, Ջաւոիկը գալիս է, կանաչ կիրակին նրա ետևից, եղևնի արդեն ծածկվել են կամ թե ծածկվելու են շուտով լեռներ, դաշտեր և պարտեզներ ծաղիկներով. բնությունը գնում է իր ճանապարհով, բայց մարդիկ, ա՜խ...



Մարտիրոս Սարյանի ձեռագիրը (1916 թ.)

---

* Ակնարկությունը ննարիչ Վարդգես Սուրենյանցի մասին է:

** Ակնարկությունը ննարիչ Եղիշե Թադևոսյանի մասին է:

*** Ակնարկությունը ննարիչ Լևոն Հազարապետյանի մասին է:

Եվ այս տխուր տարիներին պսակվել... թող լինի մեր պսակը ավելի խորհրդավոր, առանց թեթև ուրախության։

Ես անվերջ սիրում եմ իմ հայրենիքը, իմ մարտիրոս ազգը, իմ հայրենիքի սիրտը՝ Էջմիածինը։ Շատ խորն է մտել մեր սրտերի մեջ, հայր սուրբ, ձեր անկեղծ խոսքերը.

«Ես ձեզ պիտի պսակեմ Հոփփսիմեում, դուք պետք է լինեք իմ ժողովուրդը». այնքան մոտ երևացին մեզ Լուսիկի հետ այդ խոսքերը, որոնք դուք զգալով ասացիք, երևի ուրիշին դուք չէիք ասի այդ բանը։

Հայր սուրբ, ես գիտեմ, որ դուք շատ եք զբաղված, և դա կարող է ձեզանից առանձին ժամանակ խլել, խնդրում եմ չի քաշվելով գրեցեք, արդյոք կարո՞ղ ենք Լուսիկի հետ գալ ձեզ մոտ Զատկի շաբաթներին։

Լուսիկը շատ-շատ բարևում է ձեզ և Սուրենյանցին։

Ձեզ անկեղծորեն սիրող՝

МАРТИРОС САРЯАН

Հասցես՝

Թիֆլիս, Կիրպիչնի նրբանցք,
տուն № 13, Արտոյոմովի բնակարան,
Մ. Ս. Սարյանին

1916, մարտի 28